Արձանագրություն N 2.1

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/13 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 03.06.2020թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան
Հանձնաժողովի անդամներ ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Ար. Գրիգորյան
Գ. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Տեղեկություններ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/13 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցման և պարզաբանման մասին

(Ա. Միրզոյան)

1.1 Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ թվով 10 հանրակրթական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների նոր մարզադահլիճների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/13 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 2020 թվականի հունիսի 2-ին ստացվել է հարցադրում:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է տրամադրվելիք պարզաբանման հայտարարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան
Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան
---------- Ռ. Եղիազարյան
---------- Ար. Գրիգորյան
---------- Գ. Գևորգյան
Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հունիսի 3-ի թիվ 2.1 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/13

02.06.2020թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ պարզաբանումը.

Հարցադրում

Խնդրում եմ 10 չափաբաժինների համար տրամադրել կառուցվող մարզադահլիճների տեխնիկատնտեսական չափանիշները /քառ.մետր, հարկայնություն..../:

Պարզաբանում

Մարզադահլիճային մասնաշենքերի տեխնիկական ցուցանիշները՝ չափերը, հարկայնությունը, կառուցվածքը, օգտագործման ռեժիմը և այլն՝ ընդունվում են հանրակրթական հաստատությունների տիպերին, ուսումնամեթոդական կառուցվածքին և նշանակությանը համապատասխան և յուրաքանչյուր օբյեկտի դեպքում պահանջում են առանձին մոտեցում՝ սահմանվում են ոլորտի տարբեր նորմատիվ իրավական ակտերով:

Երևան քաղաքի և ՀՀ մարզերի տարբեր համայնքներում տեղակայված ընդհանուր թվով 10 հանրակրթական դպրոցների մարզադահլիճային մասնաշենքերի կառուցման նախագծային աշխատանքների ծավալի և կատարման մեթոդաբանության վերաբերյալ նախնական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է՝

- ելակետային տվյալների (աշակերտների փաստացի թվաքանակի, գոյություն ունեցող ուսումնական մասնաշենքերի կոնստրուկտիվ լուծումների, հանրակրթական հաստատության կրթական ծրագրերի աստիճանի և այլն) հավաքագրում՝ ինչը վերապահվում է Նախագծողին (կամ Մասնակցին)
- մասնագիտական որոշման ընդունում (նախագծման ենթակա մարզադահլիճի չափերի, հարկայնության, կառուցվածքի վերաբերյալ և այլն)՝ յուրաքանչյուր հանրակրթական հաստատության մասով կատարված ուսումնասիրության և իրական կարիքի գնահատման արդյունքներով:

Ինչ վերաբերում է նորմատիվ իրավական ակտերին, ապա դրանց հիմնական մասը թվարկված է գնման առարկայի տեխնիկական բնութագրի շրջանակներում, որոնցից են.

- ՀՀ քաղաքաշինության նախարարի 09.04.2014թ. ՀՀՇՆ 31-03.01-2014 «Հանրակրթական նշանակության շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին N 103-Ն հրամանը,

ՀՀ կառավարության 13.12.2007թ «ՀՀ պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու և ՀՀ կառավարության

14.06.2001թ N 532 և 03.05.2001թ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1490-Ն որոշումը և այլն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/13 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Նազիկ Հարությունյանին:

Հեռախոս՝ 011621821
Էլ.փոստ՝ tender1@minurban.am

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/13 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով